ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 353-Ա

«03» 08 2023 թ. ք. Երևան

Վ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 424-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազի 2023 թվականի օգոստոսի 2-ի N 61-Լ, N 62-Լ և N 63-Լ հրամանները, ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 59-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայոց Ձորի մարզի դատախազության դատախազ Վարուժան Զալիկոյի Ղահրամանյանին գործուղել ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության պետի թափուր հաստիքին՝ մինչև սույն թվականի նոյեմբերի 14-ը ներառյալ:

2. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Վ. Ղահրամանյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազի պաշտոնին գործուղելու մասին» ՀՀ գլխավոր դատախազի 2022 թվականի նոյեմբերի 14-ի N 424-Ա հրամանը:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ